# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 սեպտեմբերի 2025 թվականի N 1367 - Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 4-Ի N 461-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի ապրիլի 4-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ՆՈՒՎՈ ՎԻԼԱԺ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 461-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը՝

1) հավելվածի ցանկը 1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «ՀՈՒՄՔ ՈՒ ՆՅՈՒԹԵՐ» աղյուսակով.

«

| ՀՈՒՄՔ ՈՒ ՆՅՈՒԹԵՐ | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | 1404900008 | Կոկոսի մանրաթելի հիմքով սուբստրատի պարկեր | Չափը-100*18*12սմ (թաց վիճակում)<br>Պարունակությունը-50% կոկոսի մանրաթել, 50%կոկոսի տաշեղներ լվացված<br>Պարկի պոլիէթիլենի խտությունը-300գ/քսմ Պարկի պոլիէթիլենի ուլտրամանուշակագույն ճառագայթների անդրադարձելիությունը -100%, մեկ տարի շահագործման ժամկետով<br>Պարկի գույնը-ներքին շերտը սև, արտաքին շերտը սպիտակ՝ տպագրված<br>EC- < 1,5<br>PH=5,5-6,5<br>Խոնավություն - < 20% | կգ | 77 500 | Շրի Լանկա | Շրի Լանկա | 33 000 000 | |

».

2) հավելվածի ցանկի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերությունում «1 721 054 500» թիվը փոխարինել «1 754 054 500» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

25.09.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ